

Բանալի բառեր՝ զբոսաշրջության վիճակագրություն, ներգնա զբոսաշրջություն, զբոսաշրջիկի ծախսեր, զբոսաշրջային ծառայություններ, միգրացիոն հոսքեր:

ՀՏԴ 379.8 : 342.5 (479.25)

ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԴԵՐԸ ՈԼՈՐՏԻ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԼՈՒԾՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Տաթևիկ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ

Տնտեսագիտության թեկնածու,
ՀՊՏՀ Կոմերցիայի և փզնեսի կազմակերպման ամբիոնի դոցենտ,

ՀՀ զբոսաշրջության՝ որպես մրցունակ ոլորտի, զարգացման գործում մեծ է զբոսաշրջության վիճակագրության դերը: Տեղեկատվական դարաշրջանում զբոսաշրջության վիճակագրությունը այդ ոլորտի վերլուծական տեղեկատվության կարևորագույն աղբյուր և գործառնական վերլուծության գործիք է: Այն յուրօրինակ հայելի է, որում զբոսաշրջության ոլորտն արտացոլվում է իր ողջ բազմաշերտությամբ ու դինամիզմով՝ երբեմն ամբողջական, երբեմն էլ՝ միայն բաղկացուցիչ մասով: Տեղեկատվության դերը հսկայական է հատկապես զբոսաշրջության ոլորտի հաջող կառավարման մեջ, տարբեր մակարդակներում համարժեք որոշումների ընդունման ժամանակ՝ սկսած զբոսաշրջային արդյունաբերության առանձին կազմակերպություններից մինչև ամբողջ երկրում ու առանձին մարզերում զբոսաշրջային գործունեության կարգավորման պետական մարմինները:

Սակայն, ինչպես ցույց է տալիս պրակտիկան, ներկայումս զբոսաշրջության զարգացման ռազմավարական ծրագրերում առաջադրվող ոչ բոլոր կանխագործություններն են հիմնավորվում վիճակագրական հետազոտություններով:

ՀՀ զբոսաշրջության ոլորտի վիճակագրական հետազոտությունների և պաշտոնական տեղեկատվության ուսումնասիրության հիման վրա փորձենք ներկայացնել այդ ոլորտի զարգացման իրական պատկերը, առանց որի հնարավոր չէ որոշել զբոսաշրջության զարգացման հեռահար ուղղությունները:

Ներգնա զբոսաշրջային ծառայությունները Հայաստանի արտաքին արտադրանքի առևտրաշրջանառության ծառայությունների կառուցվածքում ապահովում են ծառայությունների արտահանման կեսից ավելին (2016 թ. ծառայությունների արտահանման մեջ զբոսաշրջային ծառայությունները կազմում են 60%): Ընդգծենք, որ ըստ 2014-2025 թթ. ՀՀ ազգային զարգացման ռազմավարության, զբոսաշրջությունը աշխատատեղերի ստեղծման 5 գերակա ոլորտներից մեկն է¹: Սակայն այսօր ներգնա, արտագնա և ներքին զբոսաշրջության ոլորտում դեռևս զբաղված է ընդամենը 39 հազար մարդ կամ ընդհանուր զբաղվածների 3,3 %-ը²:

ՀՀ կառավարությունը 2014-2025 թթ. ռազմավարական ծրագրով որդեգրել է այսպես կոչված «պատասխանատու զբոսաշրջության» զարգացման ուղի և պարտավորվել ապահովել զբոսաշրջության կայուն և աճող զարգացումը:

Քանի որ զբոսաշրջության զարգացումն ուղղակիորեն պայմանավորված է հատկապես ներգնա զբոսաշրջային այցելությունների և դրանցից ստացված եկամտի աճով, մեր հետազոտության առարկան ներգնա զբոսաշրջության զարգացման վիճակի վերլուծությունն է: (Տես՝ գծանկար 1.)

Ինչպես վկայում են պաշտոնական վիճակագրական ցուցանիշները, Հայաստանի զբոսաշրջության ոլորտում հիմնական ձեռքբերումն այն է, որ միջազգային այցելությունները 2010 թ-ի 729.260-ից աճել են 77%-ով և 2016 թ-ին կազմել 1.259.657 այցելու: 2010-2016 թթ. ներգնա զբոսաշրջային այցելությունների միջին տարեկան աճը կազմել է շուրջ 10 %: Զբոսաշրջիկների թվաքանակի նվազումն դիտարկվել է միայն 2015 թ.՝ 2014 թ. համեմատ 1 %-ով: Ըստ 2016 թ. ՀՀ էկոնոմիկայի նախարարության զբոսաշրջության վարչության հիմնավորման, այդ «նվազումը հիմնականում պայմանավորվել է ռուբլու արժեզրկման պատճառով Ռուսաստանից այցելությունների նվազումով»³:

Սակայն հարկ է ընդգծել, որ Ռուսաստանի քաղաքացիների՝ ռուբլու արժեզրկումով պայմանավորված այցելությունների նվազեցման հիմնավորումը ճիշտ համարվել չի կարող, քանի որ թեպետ ռուբլու կուրսի էլ ավելի մեծ արժեզրկում է դիտարկվել 2016 թ. (2014 թ. ռուբլու միջին կուրսը ըստ ՌԴ ԿԲ եղել է 38,4 ռ., 2015-ին՝ 61,2 ռ., իսկ 2016-ին՝ 67,2 ռ.), սակայն 2016 թ. ՌԴ-ից ՀՀ զբոսաշրջային այցելությունները ոչ թե նվազել, այլ աճել են 9 %-ով: Եվ սա այն դեպքում, երբ ռուբլին նախորդ տարվա համեմատ արժեզրկվել է շուրջ 10 %-ով, իսկ 2014 թ. համեմատ՝ 75 %-ով:

Բացի այդ, 2015 թ. զբոսաշրջության ոլորտում, մեր կարծիքով, պետք է գրանցվեր ոչ թե անկում, այլ աճ, քանի որ մեր երկրում տեղի ունեցան 2 կարևոր իրադարձություններ՝ Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի միջոցառումները և Համահայկական խաղերը: Անվիճելի է, որ դրանք պետք է նպաստեին զբոսաշրջիկների ներհոսքի մեծացմանը: Հետևաբար

¹ Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր, Հավելված ՀՀ կառավարության 2014 թ. մարտի 27-ի N 442-Ն որոշման, էջ 59-60


² <https://www.wttc.org/-/media/files/reports/economic-impact-research/countries-2017/armenia2017.pdf>

³ Պատասխանատու զբոսաշրջության համաձայն երկրում առավելագույնի են հասցվում զբոսաշրջության դրական ազդեցությունները և նվազագույնի՝ բացասականները: Այն համատեղում է բազմաթիվ կազմակերպությունների, այդ թվում՝ ՄԱԿ ԶԻԿ, Համաշխարհային ճանապարհորդության և զբոսաշրջության խորհրդի և Մոլորակի խորհրդի կայուն և պատասխանատու զբոսաշրջության դիրքորոշումները: Առավելագույնի են հասցվում սոցիալական, տնտեսական և բնապահպանական օգուտները, դրանցով նպաստելով ունենալով «ստեղծել մարդկանց համար ապրուստի և այցելության ավելի լավ վայրեր» (Թեյի Թաունի հիշակագիր, 2002թ.):

⁴ <http://www.media-center.am>

սխալված չենք լինի, եթե նկատենք, որ ոլորտի դանդաղ և հետընթաց զարգացման տեմպերի բացատրության համար պատասխանատու կառույցները փնտրում են արդարացումներ և ներկայացնում չիմնավորված պատճառաբանություններ:

Գծանկար 1. Ներգնա այցելությունների և զբոսաշրջիկների կատարած ծախսերի դինամիկան 2010-2016 թթ.**



** - կազմված է ՀՀ ԱՎԾ տվյալների հիման վրա

Մինևույն ժամանակ, ինչպես ցույց է տրված գծանկար 1-ում, մեկ այցելուի հաշվով կատարվող միջին դրամական մուտքերը ոչ թե աճել, այլ կտրուկ նվազել են: Ընդգծենք նաև, որ ոլորտի ուսումնասիրությունը դժվարանում է պաշտոնական վիճակագրական անհրաժեշտ տեղեկատվության գրեթե բացակայության պատճառով: Բացի այդ, պաշտոնական ու տարբեր փորձագիտական արդյունքներ ներկայացնում են ՀՀ զբոսաշրջության ոլորտի զարգացումը բնութագրող տարբեր ցուցանիշներ: Ավելին, ոլորտի խնդիրները լուսաբանող տարբեր հրատարակումներում հաճախ հանդիպում ենք պետական պաշտոնյաների կողմից ոլորտի խնդիրների ոչ ճիշտ, ուստի ոչ իրական ներկայացնելու փաստերի, որի պատճառը, մեր կարծիքով, կապված է զբոսաշրջության առկա խնդիրները և ոլորտի կազմակերպական բացթողումները կոծկելու կամ մեղմ ներկայացնելու հետ: Մասնավորապես խոսքը վերաբերում է Հայաստանում մեկ այցելության ընթացքում զբոսաշրջիկի կատարած ծախսերին: Այսպես, 2013 թ. հուլիսի 1-ին Armeff News լրատվական ընկերությանը տված իր հարցազրույցում ՀՀ էկոնոմիկայի նախարարության Չբոսաշրջության զարգացման վարչության պետ Ս. Ապրեսյանը մեկ զբոսաշրջիկի կողմից մեկ այցի ընթացքում կատարած ծախսի վերաբերյալ ներկայացնում է «2006-2007 թթ. ցուցանիշ, այն է՝ 1000 ԱՄՆ դոլար»³:

ՀՀ ԱՎԾ-ն զբոսաշրջությունից ստացված եկամուտների վերաբերյալ առանձին վիճակագրական հետազոտություն չի ներկայացնում: Այդ ցուցանիշները ներառված են ՀՀ արտաքին տնտեսության վճարային հաշվեկշռի ընթացիկ բաժնի ապրանքների և ծառայությունների արտահանում և ներմուծում ենթաբաժնում: Ըստ դրա, միայն 2016 թ. ծառայությունների արտահանումից Հայաստանը ստացել է 1 մլրդ 610 մլն ԱՄՆ դոլար, որից ՀՀ ժամանող զբոսաշրջիկներից ստացված եկամուտը կազմել է 967 մլն դոլար, ինչը նշանակում է, որ 2016 թ. մեկ զբոսաշրջիկը մեկ այցելության ընթացքում ծախսել է 768 դոլար: Մինևույն ժամանակ, պաշտոնական վիճակագրական ծառայության ներկայացրած ցուցանիշը տարբերվում է նաև 2015 թ. Համաշխարհային բանկի կողմից մշակված «Հայաստան. Հարավային միջանցքի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն» վերլուծության մեջ ներկայացվող ցուցանիշից, որտեղ ներգնա զբոսաշրջիկների կողմից կատարված ծախսերի ցուցանիշն ավելի ցածր է անգամ ԱՎԾ-ի ներկայացրած ցուցանիշից: Այսպես, 2005 թ-ին մեկ այցելությունից ստացված դրամական միջին մուտքերը նվազել են 699 ԱՄՆ դոլարից և 2013 թ-ին հասել 479 ԱՄՆ դոլարի, որի պատճառ է համարվում այցելուների կողմից գումար ծախսելու լրացուցիչ հնարավորություններ չգտնելը⁴: Մինչդեռ, ինչպես ցույց է տալիս գծանկար 1-ը, ՀՀ ԱՎԾ համաձայն միայն 2013 թ. մեկ զբոսաշրջային այցելությունից ստացված եկամուտը երկու անգամ մեծ է անկախ փորձագետների ներկայացրած ցուցանիշից և կազմում է 952 ԱՄՆ դոլար:

Ըստ Համաշխարհային բանկի անցկացրած հարցումների⁵, դեպի Հայաստան զբոսաշրջիկների ամենամեծ հոսքը Ռուսաստանից, Իրանից և ԱՄՆ-ից է, երկրորդ տեղում են զբոսաշրջիկները Գերմանիայից, Ֆրանսիայից և Իտալիայից, իսկ առաջին տասնյակում զբոսաշրջիկները Վրաստանից, Մեծ Բրիտանիայից, Ուկրաինայից և Կանադայից: Զբոսաշրջության ոլորտի պետական կարգավորման հիմնախնդիրներով զբաղվող կառույցները այս դինամիկան պայմանավորում են իրենց արդյունավետ գործունեությամբ և պետական հաջողված քաղաքականությամբ: Անկասկած, ոլորտում իրականացվող պետական քաղաքականությունը նպաստել է զբոսաշրջության զարգացմանը: Այդուհանդերձ, պետք է նշել, որ այդ զարգացումն ընթանում է բավական դանդաղ, և դա նաև՝ ներթափառական տարբեր ազդեցությունների հետևանքով: (Տես՝ արդյունակ 1.):

Հայաստան ժամանող զբոսաշրջիկների զգալի մասը (որոշ գնահատականների համաձայն՝ 70%-ը)⁶ ունի հայկական ծագում: Դա է պատճառը, որ միջազգային այցելությունների վերաբերյալ ընտրանքային հետազոտության արդյունքներով «Այցելություն հարազատներին և ընկերներին» նպատակը նշվել է որպես հիմնական:

Հաջորդ տեղում՝ որպես կարևոր նպատակ, նշվել են «Գործնական» և «Հանգստի ու ժամանցի» շրջանակներում կատարված այցելությունները⁷: Հանգստի կամ ժամանցի անցկացման նպատակով Հայաստանը որպես զբոսաշրջային

³ http://armeff.com/hy/news/erkkhosutyun/article_1372661590/

⁴ Հայաստան. Հարավային միջանցքի զբոսաշրջության զարգացման ռազմավարություն, Համաշխարհային բանկ, մարտ 2015թ., էջ 13

⁵ Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ) և ԱՄՆ ՄՉԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (USAID EDMC) ծրագրի համագործակցությամբ 2013 թ. ՀՀ սահմանային անցման կետերում իրականացվել է միջազգային այցելությունների վերաբերյալ ընտրանքային հետազոտություն

⁶ <http://galatv.am/hy/economic/142413/>

⁷ <http://mineconomy.am/media/2017/03/1456.pdf>

ուղղություն ընտրելու հարցմանը պատասխանողների կողմից հիմնական պատճառներ են նշվել երկրի բնությունը, պատմամշակութային վայրերը և արկածային զբոսաշրջությունը:

Թեպետ Հայաստան այցելածների թվում առաջին տեղում են սփյուռքահայերը, սակայն, սփյուռքից ՀՀ ժամանած այցելուների մեծ մասը երկար ժամանակ երկրում անցկացնելով հանդերձ (միջինը՝ 20 օր), ընդհանուր առմամբ շատ քիչ գումար է ծախսում զբոսաշրջային ապրանքների և ծառայությունների, մասնավորապես կացարանի, ռեստորանների և կազմակերպված շրջագայությունների վրա: Մեր կարծիքով, այդ խնդրի պատճառները կապված են Հայաստանից տևական միգրացիոն մեծ հոսքերի հետ: Դա են հիմնավորում ներքոհիշյալ ցուցանիշները:

Այսպես, ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության հրապարակած զեկույցի, միայն 2009-ին ՌԴ քաղաքացիություն է ստացել ավելի քան 54.800 հայ՝ 2-րդ տեղը զբաղեցնելով ՌԴ-ում քաղաքացիություն ստացողների առաջին տասնյակի շարքում: 2013 թ. ՀՀ սահմանային անցման կետերում իրականացված միջազգային այցելությունների վերաբերյալ ընտրանքային հետազոտության համաձայն, 2005 թ-ից սկսած, ՌԴ-ում քաղաքացիություն ստացող հայերի թիվը սկսել է կտրուկ ավելանալ: 2001 թ. ՌԴ քաղաքացիություն է ձեռք բերել 19.267 հայ, 2005 թ. այդ թիվը կրկնապատկվել է, իսկ ևս 4 տարի անց՝ եռապատկվել:

Աղյուսակ 1

Չբոսաշրջիկների բաշխվածությունն ըստ երկրների և տրանսպորտային միջոցների*

Ռուսաստան	21,7%	→ 58%	↔ 34%	Վրաստան	3,3%
Իրան	17%			Խուսիս	3,1%
ԱՄՆ	9,6%	🚗 7,7%	Մեծ Բրիտանիա	3,1%	
Գերմանիա	6,3%		Ուկրաինա	2,3%	
Նրանիա	5,3%		Կանադա	2,1%	

*- Չբոսաշրջիկների այցերը՝ 2016 թ., փոխադրամիջոցների տվյալները՝ 2015թ.

2001-2009 թթ. ՌԴ-ում քաղաքացիություն ստացած հայերի տվյալների ընդհանուր համադրությամբ կարելի է փաստել, որ 9 տարվա ընթացքում 272 հազարից ավելի հայեր ձեռք են բերել ՌԴ քաղաքացիություն: Իսկ 2011-2015 թթ., համաձայն ՀՀ Տարածքային կառավարման և զարգացման նախարարության Միգրացիոն պետական ծառայության տվյալների, Ռուսաստանում քաղաքացիություն ստացող հայերի թիվը հասել է 57164-ի⁸: ՌԴ արտագաղթողների առաջին տասնյակի ընդհանուր հաշվեկշիռում հայերը տոկոսային հարաբերությամբ 4-րդ տեղն են զբաղեցնում, իսկ 1-ին երեք տեղերում են Ուկրաինայի, Ուզբեկստանի և Ղազախստանի քաղաքացիները: Սակայն պետք է նկատել, որ այդ երկրների բնակչությունը 6-14 անգամ գերազանցում է Հայաստանում պաշտոնապես գրանցված՝ 2 972.9 հազար բնակչությանը:

Փաստորեն, ինչպես վկայում է զբոսաշրջության ոլորտի մեկուկես տասնամյակի վիճակագրությունը, ՌԴ-ից ժամանող զբոսաշրջիկների թիվը ուղիղ համեմատական է ՌԴ-ում քաղաքացիություն ստացած հայերի թվին:

ՌԴ-ից բացի, արտագաղթող հայերի նախընտրած երկրներն են Ֆրանսիան, Լեհաստանը, Ավստրիան, Բելգիան, Չեխիան, Յուժաբլիան և Յուժաբլիան:

Յուժաբլիան, օրինակ, հայերի թիվը 2000-2009 թթ. ընթացքում ավելացել է շուրջ 4 անգամ մոտ 3 հազարից հասնելով 12 հազարի: Լեհաստանում հայերն ընդգրկվել են ամենամեծ համայնքներն ունեցող 3 ազգությունների շարքում:

Ըստ Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության զեկույցի՝ հայերն ընդգրկվել են նաև այլ պետություններում աշխարհի ամենից շատ ապաստան խնդրող 25 ազգությունների շարքում: Ընդ որում, եթե 2005-ին հայերն այս ցուցակում 18-րդն էին, ապա 2009-ին արդեն դարձել են 16-րդը, քանի որ ապաստան հայցող հայերի թիվը 4 տարվա ընթացքում ավելացել է շուրջ 22 %-ով: Նրանց գրեթե կեսի նախընտրած երկիրը եղել է Ֆրանսիան, որտեղ ապաստան հայցող հայերի թիվը 2003 թ-ից սկսել է կտրուկ ավելանալ: Այսպես, եթե 2000 թ. ցուցանիշը եղել է 405, ապա 2003-ին այն եռապատկվել է, իսկ 2008-ին՝ արդեն հնգապատկվել: Ինչպես վկայում են ՀՀ պետական միգրացիոն ծառայության տվյալները՝ կապված ՀՀ տնտեսական վիճակի տարեցտարի վատթարացման հետ, արտագաղթողների թիվը հետագա 10 տարիների ընթացքում ոչ թե նվազել, այլ դրսևորել է աճի միտում:

Կարելի է եզրակացնել, որ ՀՀ անկախության տարիներին զբոսաշրջային այցելությունների թվային աճը հիմնականում ձեռք է բերվել արտերկրի արտագնա աշխատանքի մեկնող և այնտեղ քաղաքացիություն ձեռքբերող և սփյուռքից ժամանող մեր հայրենակիցների շնորհիվ: Սակայն, պետք է նկատել, որ նույնիսկ այս պարագայում ներգնա զբոսաշրջության նման զարգացումը տնտեսության վրա կունենա կարճաժամկետ ազդեցություն, քանի որ մեկ սերունդ հետո այդ այցելություններն ավելի ու ավելի կնվազեն, մասնավորապես, որ սփյուռքահայերի մեծ մասը, Հայաստան ժամանելով, հիմնականում օթևանում է բարեկամի մոտ՝ չօգտվելով հյուրանոցային ու այլ հիմնական զբոսաշրջային ծառայություններից:

Ըստ ԱՎԾ տվյալների՝ 2014-ին Հայաստան ժամանած 1,2 մլն զբոսաշրջիկներից հյուրանոցային տնտեսությունում տեղավորվել են 164 հազարը (կամ 13,7%), իսկ 2015-ին՝ ժամանել է 1 մլն 192 հազար զբոսաշրջիկ, որոնցից ևս 164 հազարն է (13,8%) տեղավորվել հյուրանոցային տնտեսությունում: Նույն աղբյուրը՝ ԱՎԾ-ն, տարբերակում է նաև բարեկամի կամ հարազատի տանը և վարձով բնակարաններում տեղավորվողների թիվը: Ստացվում է, որ ներգնա զբոսաշրջիկների միայն 14 %-ն է օգտվում տեղաբաշխման ծառայություններից: Համաձայն «Չբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենքի 8-րդ հոդվածի 2-րդ կետի՝ զբոսաշրջային տները նույնպես հյուրանոցային տնտեսության օբյեկտ են: Հայաստանում այդպիսի տեղաբաշխման միջոցների թիվը շուրջ 200 է: Նույն օրենքի 9-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն, «Չբոսաշրջային տները հյուրանոցային տնտեսության օբյեկտներ են, որտեղ մեկ շենքի կամ բնակարանի տարածքում տրամադրվում է գիշերակացի ծառայություն, ինչպես նաև կազմակերպվում և մատուցվում են սննդի ծառայություններ»: Փաստորեն, ըստ նշված օրենքի, բոլոր այն բնակարանները, առանձնատները, որոնք տրամադրվում են գիշերակաց և նախաճաշ (B&B /bed and breakfast), պետք է համարվեն հյուրանոցային տնտեսության օբյեկտ, սակայն վիճակագրական հաշվարկներում այդպիսի օբյեկտներում հանգրվանածներին ներառում են «բարեկամի կամ հարազատի տանը և վարձով բնակարաններում» հաշվարկի մեջ: Բացի այդ, ըստ «Ամերիկա» խորհրդատվական ընկերության հետազոտության⁹, ՀՀ ԱՎԾ-ն հյուրանոցային տնտեսության


⁸ http://www.smsmta.am/?menu_id=129

⁹ <http://ameriaadvisory.am/wp-content/uploads/2016/01/armenian-hospitality-industry-research.pdf>

օբյեկտներում հանգրվանած զբոսաշրջիկների վերաբերյալ տվյալները հրապարակում է համաձայն վիճակագրական ծածկույթում ընդգրկված հյուրանոցների հաշվետվությունների, ինչի արդյունքում ցուցանիշների վերլուծությունը հեռու է իրական պատկերից: Մյուս կողմից էլ, ինչպես վկայում է Նույն աղբյուրը, հյուրանոցները մոտ 35-40%-ով թերիայտարարագրում են Ներգնա զբոսաշրջիկների վերաբերյալ տվյալները: Ինչպես ներկայացված է գծանկար 2-ում, պաշտոնական վիճակագրական ծածկույթից դուրս է հյուրանոցային ծառայություններից օգտված զբոսաշրջիկների շուրջ 60%-ը:

Գծանկար 2.

ՀՀ հյուրանոցային տնտեսության օբյեկտներում հանգրվանած ներգնա զբոսաշրջիկների թիվը 2010-2015 թթ.¹⁰



Հիմք ընդունելով վերը ներկայացված փաստերն ու թվային ցուցանիշները՝ կարծում ենք, որ առաջիկա տարիներին ՀՀ ԱՎԾ-ի և Տնտեսական զարգացման ու ներդրումների նախարարության առաջնահերթ խնդիրների շարքում գերակայությունը պետք է դառնա ոլորտի զբոսաշրջության վիճակագրության վերանայումը, ոլորտի խնդիրների օբյեկտիվ գնահատման նոր մեխանիզմների մշակումը և կիրառումը:

Չբոսաշրջության վերաբերյալ վիճակագրական տեղեկատվությունը ներկայումս հիմնված է մեծ մասամբ այցելությունների և դրանց տևողության վիճակագրության, ինչպես նաև վճարային հաշվեկշռի տվյալների վրա, որոնք ըստ ամենայնի պատկերացում չեն տալիս զբոսաշրջության ոլորտի՝ որպես սոցիալ-տնտեսական երևույթի մասին և բավարար չեն գործուն պետական քաղաքականություն իրականացնելու համար, քանի որ դրա հիմքում պետք է դրվի զբոսաշրջության զարգացման նկատմամբ համալիր մոտեցում:

Չբոսաշրջության ոլորտի կարգավորումը պետք է իրականացվի նրա կարևոր նախադրյալների ու պայմանների փոխկապակցվածության և միասնականության մեջ, այդ թվում՝ զբոսաշրջության ոլորտի գործունեության վրա ազդող շրջակա միջավայրի վիճակի կարգավորմամբ:

Ավելին, զբոսաշրջության կարգավորման գործում վիճակագրության դերը տեղեկատվական բազայի ձևավորմամբ չի սահմանափակվում: Այն նաև զբոսաշրջության ոլորտում ընթացող սոցիալ-տնտեսական գործընթացների վերլուծության շատ կարևոր մեթոդոլոգիական հիմք է: Այս դերը բազմակի ուժեղանում է շուկայական տնտեսության պայմաններում, երբ բարդանում են տնտեսվարող սուբյեկտների միջև կապերը, սրվում է նրանց միջև մրցակցությունը, և անհրաժեշտություն է առաջանում անընդհատ վերլուծել զբոսաշրջային շուկան, կանխատեսել ընդունվող որոշումների տնտեսական, սոցիալական, բնապահպանական և այլ հետևանքները:

Գրականության ցանկ

1. «Չբոսաշրջության և զբոսաշրջային գործունեության մասին» ՀՀ օրենք, 17.12.2003 թ.
2. ՄԱԿ ԱՅԿ Չբոսաշրջության բարոմետր, օգոստոս, 2014թ., ՀԾՁԽ, Չբոսաշրջության տնտեսական զեկույց, 2014թ.
3. Հայաստանի Հանրապետության 2014-2025 թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագիր
4. Հայաստան. Հարավային միջանցքի զբոսաշրջության զարգացման ռամավարություն, Համաշխարհային բանկ, մարտ 2015թ.
5. ՀՀ սահմանային անցման կետերում միջազգային այցելությունների վերաբերյալ ընտրանքային հետազոտություն, Գերմանիայի միջազգային համագործակցության ընկերության (GIZ), ԱՄՆ ՄՉԳ Ձեռնարկությունների զարգացման և շուկայի մրցունակության (USAID EDMC) ծրագիր, 2013 թ.
6. armstat.am
7. <http://mineconomy.am>
8. <https://www.wttc.org>
9. <http://ameriaadvisory.am>
10. <https://media.am>
11. <http://www.tert.am>
12. <http://www.smsmta.am>
13. <http://galatv.am>
14. <http://armef.com>
15. <http://www.media-center.am>

Ներկայացվել է 22.02.2018թ.
Ընդունվել է տպագրության 28.02.2018թ.

¹⁰ Նույն տեղում: